ՄԱՐՏ

1913 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ № 6 ՄԱՅԻՍԻ 5

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑ Է

առուստեան ժ. 10—1-ը (բացի կիրակի և տօն օրերից).

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷՆ՝

Москва, Редакція армянск. журн. „МАРТЪ".

Rédaction de la Revue „MART" Moscou.

ՀԵՌԱԽՕՍ № 73-58.

Խմբագրատան ժամանակաւորապէս տեղափոխուած է՝ Тверская 62. кв. 1

ԲԱԺԱՆԵԳԻՆԸ՝

տարեկան 4 ր. կէս տարին 2 ր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 20 ԿՈՊ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

տողատեղին (պետիտ) 50 կ. Ցնցտրից առաջ՝ կրկնակի հրատարակութեան, ուսուցչութեան և բանտարկութեան համար ½ մասը.

ԽՄԲ. ԿԱՆՈՆՆԵՐ. Ընդունուածները, պարբերական հրատարակութիւնները, բանդերները, գրամեկեան փոխադրութիւնն և ամէն մի ծրար խնդրում ենք ուղարկել խմբագրութեանս՝ հասցեով՝ ինչպէս տպուած է ներքեւ հասցէի առաջին երեսում.—Москва Редакція армянск. журн. „МАРТЪ".

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՈՒԶՈՒՐՊԱՑԻԱՆ. ԶԿԱՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.—ՆԵՐՍԷՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ ՕՐ. ՇԱՀԻՆԵԱՆ.—Ա. ՇՈՒՐԵԱՆ. ԽՐԻՄՈՒՄ.—ՍԻՄԷՈՆ ՀԱՄԱԼԵԱՆ. ՓԵՌՈՒՐՆԵՐ՝—Ա. Կ. ԼՐԱԳԻՐԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՆ. ԴԷՄՆԵՐՈՒՄ. ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.—ԱՐՇԱՄ. ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԽՇՏՈՒԹԻՒՆ. ՖԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ. ՔՐՈՆԻԿՈՆ. ԻՆՉՊԷՍ ԸՆՏՐԵԼ. (Դասակ խմբագրութեան) Ն. Ն. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՏԷՐՏԷՐԱՑՈՒՆ. ՀԱՅԱՐՆԱԿ ՎԱՅՐԵՐ ԵՒ ԳԱՂՈՒԹՆԵՐ.—Դարձեալ՝ Ն. Ք.. ԱՍՏՐԱԽԱՆ՝ ՍԻԼՎԻ. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. «ՄԱՐՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ. ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ. ՊՕՍՏԱՐԿՂ. ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՈՒԶՈՒՐՊԱՑԻԱՆ

Մի աշխարհական գրական մարդ Թիֆլիսում ազգասիրական գրագրաններին գրաբարներին փոշիները թափահարելուց՝ յայտարարեց ի գիտութեան ընդհանուրին, որ լրացել է ապագրական գործի 400 ամեակը։

Դրան խիստ ազդունեցին աշխարհականների ձեռով լոյս տեսնող պարբերական թերթերը, գրան ազդունեցին ապագրական գործին նուիրուած մարդիկ՝ բանաստեղծներ, վիպագիրներ, թատերագիրներ, հրապարակախօսներ և այլն։ Ու ամենքն էլ տեղեակ յայտնեցին, որ զէթ այսօր պատկուի տաճկանքների ստրուկ հայ գրականների վարձի ցնորքը, որ հիմնուի մի գրականական ֆոնդ։

Այդ միջոցին էջմիածնում մեծամեծ մատենադարանի կողքին անոյշ անուրջներում տաքնող կղերն՝ ասես էլեքտրական զսպանակով հարուած՝ վեր թռան և պատիր քարոզներով կանչեցին, որ այդ հանդէսի գլուխն իրանք պիտ անցնեն, որ մինչեւիսկ հայ գրականներն իրանց ուսերից պիտի նայեն դէպ այդ նոր գարագլուխ կազմող տաճարը։

Եւ նրանք գիտեն, որ ապագրութեան գործի 400 ամեակը գրականների նուաստարդն է, որ այդ հանդէսի փեսաներն իրօք գրականներն են, ուստի և իրանք այս դէպքում հնարաւորութիւն չպիտի ունենան իրանց գոյութիւնն ետ ցոյց տալու, ուստի և մի նոր միջոց մտածեցին, որ ժողովուրդը այս անգամ ետ մոլորուի, որ նրա գործերի երասանն այս անգամ ետ մնայ իրանց ձեռին, որ նրա քրտինքից բղխած կոպէկները այս դէպքում ետ թուխ դան իրանց փէշերի տակ։

Եւ կղերն այդպիսի մի ելք գտան։

Որովհետև հայի կրթական հնարաւորութիւնների դեկը մի անողոք ճակատագրով այսօր տակուին կղերի ձեռին է, որովհետև հայ ժողովուրդն առ այժմ բացի զարոցից չունի մի այլ առաւել կարեւոր հնարաւորութիւն, ուստի և հարպեկ կղերը գրականական ֆոնդը կոխեցին անդուն մէջ, գեռ չհասցնելով թանի կրակին և նրա փոխարէն հրապարակ հանեցին զարոցական ֆոնդը։

Դժբախտաբար հայ մամուլի մի մասը կուսակ-

ցական ցաւով հիւանդացած՝ կուլ գնաց այդ կղերական քաղաքականութեանը և անցաւ կղերականութեան կողմը, իսկ միւս մասը խուսեց մինչևոր յոգնեց։

Կղերն, ի հարկէ, եգուիտական ձևով, բայց ոչ եգուիտական խելացիութեամբ շափազանցից հանդէսներ սարքեցին, աչքում փոշի փչելու համար և իրանց ուղածն ամրացրին ու գրականական ֆոնդի փոխարէն հրապարակի վրայ սարքեցին դպրոցական ֆոնդ։

Ահա այդպիսով առաջ եկաւ առեղի ուղուրդացիան, առաջ եկաւ և ստեղծեց այնպէս մի գրութիւն, որ երկու գործն էլ ճեացրին մի պատանի մէջ։

Մի քանի ամիս ևս և սարին կլրանայ այն օրուանից, երբ կղերական մամուլը փչեց, ուռճացրեց զանազան կոնդակներ, երբ կղերը ապագրութեան գործի 400 ամեակի ոտոր հոգեհանդիսաներով ոտոնեցին և դիպի-փիպի թափորներով միամիտների աչքը շլացրին։

Ուղուրդաւորները քար նետեցին գրականական ֆոնդին և փքեցրին դպրոցական ֆոնդը, բայց և այնպան երկար ամիսների ընթացքում այս ֆոնդն էլ դարձրին օրօրոցում կապկած մի հիւանդոտ մանուկ, որին ոչ կաթ էին տալիս անարատ սոխնքից, ոչ էլ կարողանում էին նրան առողջացնել։

Հայրապետական կոնդակին ոչ-ոք նշանակութիւն տուաւ, ոչ-ոք ինքնաբերաբար մտածեց՝ ձեռը գրպանը տանելու և՝ կոնդակի կոչին համաձայն՝ մի քանի կոպէկ նուիրաբերելու։

Ու երբ ամիսներն անցան և այդ ամիսների ընթացքում էջմիածնում գեռ մտածում էին ամենահամեղ խորտիկների մասին՝ հայ ժողովրդի գիտակցող մասը հեռվեռակ զարթեց և իւր արթնութիւնը հացրեց իրանց աշխարհի ամեն կողմ։ Ահա այդ ժամանակ կղերը մի նոր զարանակի հարուածով աչքերը շռեցին և վեղարաւոր ագենտները ձգեցին գիւղ ու քաղաք ու նուիրաբերութեան գործը գարձրին Սիոնի մուրացկանութիւն։

Մի Ներսէս եպիսկոպոս Մուրավերդեան, որ Թիֆլիսից նախ Պետերբուրգ գնալով, այնտեղ ամիսներ անցկացնելուց՝ եկաւ Մոսկուա, իբր դպրոցական ֆոնդի մասին փող հաւաքելու։

Ով չգիտէ, որ Ներսէս եպիսկոպոսն այսօր հնութեան ներկայացուցիչ է, որ ու

քան առաջաբերն թափում էր նա «Մլուէանակից Բազար» հիւրանոցում։

Ինքը երբէք չէ մնարում։

Եկեղեցու հաշուից։

Բայց ճշգրտաբէն եկեղեցին այդ ապարդիւն ծախսուած հարիւրները կարէր քաղցածներին, դառն զրկանքի ենթարկուածներին, որ աւելի քան քրիստոնէական կլինէր։

Ներսէսը Մոսկուա է եկել խանական թոթուումով։ Իրաւ է, նա մի ամբողջ թեմի առաջնորդ է, բայց նա, չոլիսի մոռանայ, որ վեղարաւոր առաջնորդ է, որ առաքելոյ աշակերտ է, ուստի և զուր բարբանջանք է թէ թեմական առաջնորդն իւր դիրքի համեմատ պիտի ապրի։ իսկ Մոսկուա գալուց՝ առաջնակարգ հիւրանոցներում պիտի իջևանէ, սեպհական կառք պիտի ունենայ դռնապանները հարիւրանոցներ պիտի ընծայէ, բայց փոյթ չէ թէ մի քրանթոր ուսանող ուսման վճարը (50 կամ 25 ր.), չկարողանալով վճարել միանգամայն կղզկուի ուսումը շարունակելու կարողութիւնից. փոյթ չէ, որ բազմաթիւ ընտանիքներ կորսուեան անդունդի եզրին են հասել, օգնող ձեռքից խլուած զուրկ լինելով. փոյթ չէ, որ այդպէս մի վեղարաւորի մի ամսուայ ծախսածը մի հայ ուսանողաբանի ամբողջ տարուայ կարիքը կլրացնէ։

Այսպէս արտաքին կեղեներ սուազելով, իրանց դիրքը անուանի հիւրանոցներով ու շքեղ կառքերով շրջանելով, ինչ ասել է հարկաւոր, որ ոչ միայն գործ չէ առաջանալ, որ ոչ միայն եղած գործն էլ կիսատակուի, այլ դեռ մի ամսոյ բիծ էլ կաւելանայ հայի անուանը։

Տարակոյս չկայ, որ ամօթ է, քաղաքներ շրջել, ազգերի հաշիւը վայելել, միևնոյն ազգերին և նրանց փեսաներին ու սրբանեակներին ազգային գործերին զեկավար նշանակել։ Ամօթ է, ուրիշի իրաւունքը ձեռք առնել և այդ իրաւունքը գործադրել անձնական քմայքով։

Ուղուրպացիան մարդկութեան պատմութեան էջերում շատ աշխարհներ է աւերել։ Ուղուրպացիան միջին դարերում, Թիւրքի անուներ շահագործելով, ինդուլգենցիաներով արեան առուներ է հոսեցրել, ուղուրպացիան այսօր էլ մարդկութեան ասն մի փոքրագոյն անկիւնում— հայերի մէջ նոյն քարոզիչն է անում։ Սակայն եթէ ուղուրպացիան պատերի դրսից է ժարհում ներս խուժել, նրան դեռ դժուար չէ դիմադրել, բայց վայ այն տանը, որտեղ ուղուրպացիան ծնունդ է առնում ներսումը։ Այնտեղ աւերածութիւնն անխուսափելի է։

ՉԿԱՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՆԱՀԱՏՈՒՄ

Եթէ անհատը որևէ գործ կատարելու միջոցին՝ օրոշ չափով ապատում է և այժ և էներգիա, այլև օրոշ չափով գործադրում է ժամանակ թէկուզ կապիտալիստական աշխարհում. թէկուզ հասարակական կամ գրականական ապարդիւնքներում, միևնոյն է, նա համապատասխան իւր աշխատանքի՝ պէտք է փարձատրուի։

Այս պարտականութիւնը կատարելու՝ ոչ միայն մի հարստից, մի գործատուտերոջից պէտք է պահանջուի իւր աշխատանքների փերարերմամբ, այլ նոյնը՝ և մի ամբողջ հասարակութիւնից, ժողովրդից, ազգից. իրանց գործիչների նկատմամբ։ Ապա թէ ոչ՝ եթէ մի հասարակութիւն չէ հնանում փարձատրութեան սկզբունքին, այլ իւր գործիչների աշխատանքի պատուղը վայելում է առանց փարձատրութեան, նա նոյնպէս պէտք է կեղեքիչ համարուի։

Կազդուում է կապիտալիստը, գործատուտերը, վաճառականը, վաշխառուն և այլն նրանք աշխատաւորի աշխատանքի արդիւնքի մեծ ասկոր խլացնում են, իսկ իրան վերագործնում մի շատ անշան մասը։

Նոյն օրինակին է նման և հասարակութեան վերաբերմունքը դէպ իւր գործիչները։

Չկայ մի ուսուցիչ, մի գրականագէտ, հասարակական մի այլ աշխատաւոր, որ փարձատրուի աշխատանքի գնահատման սկզբունքի վրայ։ Հասարակութիւնը ժնում է նրանցից՝ ինչ որ իրան հարկաւոր է, ժնում է նրանց վերջին ոյժը և փոխարէնը հատցնում նրանց մինչև մուրացկանութեան գաղերը։

Առնենք օրինակ՝ հայ գրագէտներին։ Ինչպէս են նրանք փարձատրում։ Թողնենք հէնց այն արհեստական ձևով գրքերի վաճառումը, թողնենք այն՝ հրատարակների գնները բարձրու ձեր, առնենք հէնց երեսն առի ունեցող յօրելեանները։ Ինչեր են գրատ, ինչով են գանագանում մուրացկանութիւնից։ Միմիայն նրանով միայն, որ այդ մուրացկանութիւնը տեղի է ունենում փոքր ինչ հանդիսաւոր կերպով, փոքր ինչ շինծու, փքուած ու անմիտ ձևականութիւններով։ Եւ այս տխուր գրութիւնը շատ ու շատ անգամ ստիպում է 25—30—50 տարիներից ի վեր աշխատող գրականագէտին վաճառի հանել իւր հոյակապ գրքերը և գրքերի թիայիսկանութեան խնդրով։ Եւ նրանք գրքում են, լաւ իմանալով, որ իրանց արտադրանքը դեղ է, բայց արգահատանքի վիճակը նրանց ստիպում է այդպէս լինել, մանաւանդ երբ նրանք անպատճառ կամենում են իրանց երեսարամեայ գործունէութիւնը պատկել յօրելեանի հանդիսով, մանաւանդ, որ այդ հանդէսները միմիայն պատրուակ են գտա-